

ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ հաւար սարե- կան 10 ֆրակ. վեցաւ- սիայ 5 ֆրակ: Արսասահ- մանի հաւար սարեկան 12 ֆրակ, վեցամսեայ 6 ֆր.

ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Գրութիւնք և՛ չեն տրուիր:

Ծանուցման տոյր 20 սան- րիւն է:

ՇԱՐՋՈՒՄ

հաւանկ և՛ գրաւ գրիկի
ԽՆԿԱԳՐՈՒՄԻՆ ԿԱՆԳԻՆ

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна.

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐՋՈՒՄ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ՏԳԼԵՏ ՀԵՏԵՏԻՈՂՈՒԹԻՒՆ

—)(—

Տգիտութեան արտագրած ա- ռաջին պատուհասներէն մէկն ալ, գուցէ ամենէն մեծն է աշխարհ- հային իրերը իրենց ճշմարտ սահմաններուն մէջ յստակ չը տեսնել:

Եւ այն ազգը որ ամենէն բա- ռուար թիւը կը պարունակէ ազէտ ու անտրամաբան միտքերու, ա- մենէն շատ ենթակայ է զոհեր տալու զաւանան և խաբեբայ ա- րարածներու որոնք գիւրաւ իր մէջ կը սողոսկին:

Չենք գիտեր թէ մեր մէջ աը- գէտներու շատութենէն է, թէ ցեղային տեսակ մը գիւրահա- ւանութեամբ մեր գէտ ելած ամէն տեսակ խաբեբաներու ականջ կը կախենք, կը քաջալերենք զա- նոնք իրենց ազգագաւ կամ յի- մարական ձեռնարկներուն մէջ, մէկ խօսքով ակամայ մեղսակից- ներ կը դառնանք անոնց. բաւա- կան է որ իժի լեզու, ճկուն գը- ռիչ մը ունենայ, և մենք պատ- րաստ կըլլանք այրելու պաշ- տածնիս և պաշտելու ինչ որ այրած էինք:

Ի՞նչ աւելի փայլուն օրինակ մեր ազէտ գիւրախաբութեան քան Վառնայի մէջ երեւցած փո- շոցային թերթը: Ի՞նչ կընէին անոնք, եթէ ո՛չ քանզի տարի- ներու ընթացքին մէջ ահագին զոհողութիւններով, ծովածաւալ արեան գնով ձեռք բերուած յու- սալիք և վեհանձն ձեռնարկ մը. ի՞նչ կընէին, եթէ ոչ եղբայր եղ- բոր գէտ հանել, ատելութիւն տարածել հայերու մէջ, անշա- տել զանոնք արեւնակցի տաք զրկախառնումէ, մէկ բառով յի- տին լրբութեամբ ծաղրել մեղ համար ամենէն նուիրական բա- ները, և յոյսը, և արիւթիւնը, և հերոսը, և մինչեւ իսկ . . . Երբ:

Չէ՛, մենք զատ ոչ մէկ ազգ չպիտի հանդուրժէր անոնց զո- յութեանը այնքան երկար տան- այլ պիտի վանէր իր ծոցէն այն կաշառակեր օտար հրէշները զորս կը սնուցանէր:

Բայց մենք հանդուրժեցինք

ատոր, մենք շատերը քաղցրե- ղէններու պէս ըմբռնեցին այն լուսանքներ որ հայուն երեսին կը ժայթքուէին . . .

Այսօր անոնց ճշմարտ գոյնը կը փայլի. բայց այդ գիպուածի գործ է: Կրնար ծածուկ մնալ, և կը տեսնէք թէ այդ ձախող պա- րագային ի՞նչ ազէտաւոր շաւղի մը մէջ ինկած պիտի ըլլային կոյր և անխորհուրդ հետեւող- ները:

Ամէն ատեն միջոցներ չեն ներկայանար ազգապիտան զազրու- թիւններ պարզող, բայց և այն- պէս չկայ աղտոտութիւն մը որ չզգացուի, բաւական է որ մարդ- քիչ մը ողջամիտ, փորձառու և լանիմաց ըլլայ, վերջապէս չըլ- լայ բարոյական կոյր մը որ գէտը ելած ամէն սինկոր, ամէն դա- ւաճան՝ ազգաչէն բարենորոգիչի տեղ դնէ:

Երախայական մաքի բացար- ձակ ապացոյց առած կըլլայ ան որ յափշտակուիլ կը սիրէ ամէն լսածէն ու կարդացածէն, համո- ղում գոյացնելէ առաջ առանց պահ մը կանգ առնելով իր դա- տողութեանը գիմում ընելու: Ո՛չ ամէն պերճախօս՝ ողջամիտ է, ո՛չ ամէն գրող ճշմարտախօս, ո՛չ ամէն հոգեւորական Գրիստոսի փոխանորդ: Մեր ընկերային բարդ ու շփոթ կարգերուն մէջ հիմակ շատ հեշտ դարձած է աղ- ուէսի մորթով չըլիլ հետնիվեր քաշկուտելով հէք միամիտներու թափօրներ, որոնք կը դարձնար- ձին խօսքար, հմայուած, ինչ- պէս լամպարին շուրջ թիթեռը որ վերջապէս լուսայեղց ապա- կիին տաքութեանը վրայ կայրի կը մրկի:

Մեր ազգային էութեան հի- մերը քանգելու քստմեղի ու զիւային կոչումը ունեցող այդ հրէշներէն հեռու նետուցէք, ինչք միամիտ հայեր, և գոնէ, թէ որ չէք կրնար գիտա՛ցարար թոթափել կապանքներն այդ ի- ժերուն որոնք միշտ կը գալար- ուին ձեր կեանքին շուրջ, բնազ- զարար ընդունեցէք զանոնք՝ ջախջախելով անոնց թունաթոթում՝ օղակները:

—)(—

ՀԱՅԱՍՏԱՆ ՍՈՎԱՏԱՆԶ

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

—)(—

Յարգոյ Պաշտօնակիցներ,

Սրտագին խնդակցութիւն Ձեր ազնիւ ձեռնարկին համար, որով կը հրաւիրէք հայ ժողովուրդը օգնութեան ձեռք կարկառելու իր եղբայրներուն որոնք ծայրայեղ թշուառութեան մատնուած են Հայաստանի մէջ: Ներքին կը գտնէք քսան ֆրանք, զոր կը խնդրեմ ընդունիլ իբր «Իրաւ- ունք» ի լուսան ի նպատակ իր տա- ռապող ազգակիցներուն:

Ձեր՝

Խնր. «Իրաւունք» թ. 4. Պ.

Բ. ՅՈՒՅԱԿ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ	
Արդիւնք Ա. ցուցակի	60 ֆր.
«Իրաւունք» սոկեգրամ	20 "
Տեարք	
Յ. Արապեան	5 "
Տ. Աճէմեան	4 "
Ուրուր	1 "
	90 "

ՀԱՅ ԴԱԻԱՃԱՆ ՄՐ(Ը)

«ԿԱՏԱԿ» ԵՒ «ՏԱԻՐՈՍ»

ԳԱՂՏԻՔԸ

—)(—

«Երկ Վառնայի «Տաւրոս» ին գրածները ճիշդ են — և մենք պատճառ մը չունինք ստուգութեանը վրայ կա- կածելու . . .»

Մ. ՓՈՐՏՈՒԳԱԼԵԱՆ

—)(—

Վառնա հրատարակուող պուլ- կարական «Միւր» շաբաթաթեր- թին վերջին թիւէն կարտատը- պենք հետեւեալ երկու նամակ- ները:

ԼՐՏԵՍԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐ

Թարգ. Գերմաներէնէ

Տիկին,

Մինչեւ ցայսօր իմ նամակին չը պատասխանեցիք, և կը տարակու- լիմ: Կէթ հաճեցէք ինձի զրկել ան- ցազիրս, որուն շատ պէտք ունիմ:

Բիֆաթին ըսեր էք որ ես իբրև օրագրող 3,000 ֆր. կը շահիմ, բայց ստիկա լաւ բան չէ, որովհետեւ կս

(Ը) Խոստացուած երկու թղթակ- ցութիւնները զանազան պատճառնե- րով անհնարին ըլլալով հրատարակել, մեր ընթերցողներուն հետաքրքրու- թեանը կը ներկայացնենք ներկայ երկու նամակները:

Փարա մը իսկ չունիմ. կը պահանջեմ 50 լիւրս յանձնելու համար Պոլիս հասնող անձին անունը: Ինչո՞ւ ձրի- ապէս աշխատիմ: Գրեցէք ինձի նաեւ Կաթիլի մասին տեղեկութիւններ. խնդրեմ ջանացէք որ Թուրքերը շու- տով այդ անձին անունը իմանան: ԱՅՆ ՀԱՅՐ ՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐ- ԹԵՐԸ ԿԱՐՈՂ Է ԼՈՒՅՆ ԵՒ ԿՈՉ- ՈՒԻ ՏԻԳՐԱՆ ԾԳՆԱԻՐՈՒՄԱՆ:

Խնդրեմ հոգ տարէք որ շուտով ստակ ձեռք բերեմ: Յարգալից ող- ջոյները: Ձերգ. Յր. Գ.

Թարգ. Գերմաներէնէ

Թանկագին Պարոն, 21 Նոյ.

Հաստատելով 17 օր առաջ գրած նամակս, որով կը ծանուցանէի ձեզ թէ կարող եմ լռեցնել տալ ընդ միւս Հայ յեղափոխականներուն կողմէ խմբագրուած թերթին ի Մարտիլիս, Ժընէվ, Լոնտոն ևւայլն, և զուք պատե՛հ չսեպիցիք պատասխանել ինձի: Այսօր կուզեմ ծանուցանել միայն թէ անձ մը, ուսանակատակ, ընկեր- վարական, քանի մը օր առաջ Վառ- նայէ մեկնեցաւ ևւ Կ. Պոլիս գնաց ընտանիքով՝ ուստիկանութեան ու- շաղրութիւնը չհրաւիրելու համար: Մակեդոնական Յեզ. Գօմիթէն զըր- կած է զայն լրացնելու պակասած գրամական գումարներն հոն ընակող մակեդոնացիներէն ժողովելով զանոնք: Առանց գրամի աշխատելու ու եւ է շահ մը չունենալով, պատրաստ եմ հետա- գրով հաղորդել անունն յիշեալ ան- ձին՝ եթէ կառավարութիւնը համա- կերպի նոյնպէս հետագրով ինձ 50 օսմ. սոկի զրկել տեղուոյս պուլկարա- կան ազգային պանգային միջոցով:

Միայն այդ պայմանով կրնամ ը- նել: Վերջիշեալ անձը անցեալ կի- րակիէն ի վեր կը գտնուի Կ. Պոլիս ևւ արդէն սկսած է աշխատիլ:

Ուստի եթէ կուզէք երես ունենալ ձեր կառավարութեան առջեւ, պէտք եղած միջոցները ձեռք առէք:

Բարեկամարար ողջունելով ձեզ,

Յր. Գ.

Պահարանի հասցէն՝

Էռնեստ ԿՓ. Պոնկոլոսի

Մեզուրլիզ փողոց, քիւ 37

Բերս, Թագսիլ

Վերոգրեալ լրտեսական նա- մակին մէջ յիշուած Տիգրան ձգնաւորեան՝ այն անձն է որ անցեալ տարի Չազրեանի և Ֆէ- լէկեանի (այս վերջինը յիտոյ գաւով արտաքսուած) ընկերակ- ցութեամբ «Կատակ» թերթը կը ղրատարակէր:

Այժմ նոյն Տիգրան ձգնաւոր-
եանն է (Տիւնճէ) որ, «Կատակ»
շարունակութիւն «Տարուս» վա-
րիչն ու խմբագիրն է Չապրեանի
անուան ետին սրբողում, և որ
այս անգամ «Քաճ, քաճ, Գիտող»
և այլ կեղծանուններով կը յա-
րատուէ իր հայհոյակից և ազգա-
զաւ գրութիւններուն շարքը:

Այս երկու համանման թերթե-
րուն կատարի յարձակումները
յեղ. կաշմակերպութեանց և հայ
ազգին պերտութեան շղթաները
խորտակելու ձգտող ամէն ազնիւ
ձեռնարկներու դէմ, արդէն կաս-
կածներ կը ներշնչէին թէ «Կա-
տակ» եւ «Տարուս» ո՛չ թէ ա-
նաչառ և անկեղծ քննադատի
գերը կը կատարէին արտասահ-
մանի հայ մամուլին մէջ, այլ
թուրք կառավարութեան կողմէ
վարձուած ազգակործան օսկան-
ներ էին պարզապէս: Ինչ որ
անցեալին մէջ կտոկոկէր էր, այ-
սօր բացայայտ ճշմարտութիւն է:

«Սիրա» անփո արիւնքի ծա-
ւայութիւն մը կողմէ մատուցա-
նել հանրութեան, նախախնամա-
կան միջոցով մը յանկարծ մէկ
կողմ առնելով այն ս'է վարագոյ-
րը, որուն ետին կը սողայ եղբր
ամենէն դժոխային դաւաճանու-
թիւնը:

Բոլոր սրտով կը ցաւինք այն
միամիտներուն վրայ որոնք Տա-
րուսեան, Կատակեան ըլլալը հայ-
րենասիրութեան և ազատութեան
յանգեղութիւն միջոց կը դաւանէին:

Իսկ բուն ազատու կուսակիցնե-

րուն կը ձօնենք «Սիրա» երկու-
նամակները իբր երկու պերճա-
խօս վաշտագրեր իրենց «ազգա-
սիրական» գործունէութեան:

Ահա մեր առաջին ու վերջին
պատասխանը փողոցային դաւա-
ճան թերթիւն, անոր արժանաւոր
խմբագիրներուն և ոչ նուազ ար-
ժանաւոր կուսակիցներուն:

Խեղճ «Լեռան մարդ, տա-
րաբախտ» Զէյթունցի

ԲՈՒԼՎԱՐԻՈՅ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԶԻՆՈՒՆԵՐԸ

—) (—

Փիլիպ Տօմիւի արշաւանքից յե-
տոյ, թուրք կառավարութիւնը սկը-
սեց ամէն միջոց գործ դնել արմա-
տախիլ անկուր Բուլղար «կոմիտա-
ներին» որոնք մահազուշակ ուրու-
կանի նման սարսափ ազգեցին բը-
նապետութեան բոլոր գործընկեր
վրա:

Զուր ջանք: Սարուկը նրկում է
զարեւոյ, նրկում է մեռելային քնով,
բայց երբ մի անգամ ցնցում է,
զգում է իր վիզը քերծող լծի ծան-
րութիւնը, զգում է իր արգահա-
տելի վիճակից, թափահարում է իր
վիզը մինչև որ կարողանում է նե-
տել ու ջախջախել այդ ծանր լուծը:

Տօմիւն թողեց յեղափոխութիւնը,
բայց գեռ տարին չանցած 1898 թիւ
յուլիսի չորսին Սոսիփան Կարաջա-
ն հաճի Գիմիզիին, որոնք արդէն
հայրուկային դպրոցը սնցել էին,
կրկին Բուլղարիայից անցան Բուլ-
ղարիա մօտ երկու հարիւր հոգով:

Այդ երկուսն էլ ժողովրդի մէջ ար-
դէն վարկ ունեցող քաջեր էին. այդ
պատճառով շատ մարդիկ խոտաղան
անցնել նրանց դրօշակի տակ:

Սակայն խօսք և գործ իրարից
շատ հեռու են. խմբագիրները, երբ

եկան ժամագրագայրը, հազարների
փոխարէն, միայն տասնեակներ զը-
տան:

Այդ տիւր փաստից ազգված կա-
րագիտան հետեւեալ խօսքերը ասեց իր
փոքրիկ բանակին.

—Հրահրվածները շատ են, բայց
ընարվածները քիչ. Աստուած պատժէ
մեր չորրածիններին և հարուստնե-
րին, նրանք փճացրին մեր գործը.
սակայն հոգ չէ. թէև քիչ ենք,
բայց և այնպէս երթանք մեր գերի
հայրենիքը. մեր նպատակը Պօլիսը
առնել չէ, այլ մեր եղբայրներին
ցոյց տալ թէ ինչպէս պէտք է մեռնել
հայրենիքի համար. . . . մենք քիչ
ենք, բայց մեր ոսկրները հայրենի-
քի ապագայ երջանկութեան համար
մեծ ծառայութիւն կը մատուցանեն:

—Կեցցէ Բուլղարիա, կեցցէն հրա-
մանատարները, ոգեւորված պա-
տախանեց փոքրիկ, բայց հայրե-
նիքի սիրով վտոգիւծ բանակը:

Կարաջան խուճեք աւելի լաւ էր
կազմակերպված և որոշ ծրագրով:

Այդ խուճեք գիտէր իր սկսած գործը
և գիտակցօրէն մտաւ իր գերիհայրե-
նիքը, քաջագործութեան հրաշալի
օրինակներ ավեց, արուկ ու ճնշված
ժողովրդին, սակայն նոյն եղբրական
վերջը ունեցաւ: Հաճի Գիմիզիին
յուլիսի 18ին շրջապատվեց բազմա-
թիւ թուրք զինուորներից և հերո-
սական մարտի մէջ ընկաւ իր ար-
ժանաւոր ընկերներին հետ: Ինչնամին
նրանց զլուխները կտրեց և իբր
յաղթութեան նշան տարաւ: Կա-
րաջան ձերբակալվեց իր շատ ըն-
կերներով, որոնք քարոզիչներ տաճ-
կական կայսրութեան ամենահեռու
և վատաբաղ իրմայով անկիւններ
ըն:

Հերոսները ընկան, գործը չը մե-
տաւ, սարուկը ոգեւորվեց, նրա ա-
յլըստամբական լինի զարգացաւ:

Շնորհիւ Լեւակու, Բակոբակու,

Բօտեւի, Օրբէտէնեւի և ուրիշների
յեղափոխական կազմակերպութիւնը
ճիւղաւորվեց ամբողջ Բուլղարիայում:
Բայց գեռ ժամանակը չէր հասել,
բուլղար ժողովրդին վիճակված դառն
բաժակը գեռ չէր դատարկվել: 73
թիւն ձերբակալվեց պաշտելի Լեւա-
կին և կախաղանի մատնվեց. մօտ
երկու տարի յետոյ Բօտեւը Բուլժա-
նիայի արշաւեց Բուլղարիա և Թուր-
քերի հետ մղած կռոււած ընկաւ. շատ
նշանաւոր յեղափոխականներ բանտի
և մահի բաժին դարձան. բայց բուլ-
ղար ժողովուրդը դրան էլ զիմացաւ,
չը յուսահատվեց. ընդհակառակը հա-
ւաքեց իր բոլոր ուժերը և յեղափո-
խական նոր ուժերի առաջնորդու-
թեամբ ապստամբութեան դրոշակը
բարձրացրեց: Եկան բուլղարական
սարսափները—կոտորածները, վերջա-
պէս Ռուս-տաճկական պատերազմը,
որի հետեւանքը եղաւ ազատութիւն-
ըն: Եւրոպական ղեկավարները այդ
երկար ժամանակի ընթացքում լոկ
հանդիսատես էին, մինչև որ ստիպ-
ված եղան հրապարակը մարտի:

Հայ ընթերցող, արդիօք տեսնու՞մ
ես թէ որչափ մեծ նմանութիւն կայ
մեր և բուլղար յեղափոխութեան
մէջ: Բայց միշտ այդպէս է, յեղափո-
խութիւնները ամէն երկրում միշտ
իրար նման են. ամէն տեղ նոյն սր-
խալը, նոյն դաւաճանները, նոյն ե-
տանդուն հերոսները, նոյն վախկոտ
յեղափոխականները: Եւ միշտ էլ
այդպէս է լինելու ամէն տեղ, քանի
որ գեռ կան ճնշվածներ և ձգտում
ուռնեն ազատվելու:

Գարեջուր սարուկ ազգը մի քանի
տարու՞մ չէ կարող գուտ յեղափոխա-
կան տիպեր արտագրել: Յեղափոխա-
կան արիւնոտ կեանքն է որ կռոււ
ու կոփում է թոյլ սարուկի բնա-
ւորութիւնը և ւտեղծում գուտ յե-
ղափոխական տիպեր: Յեղափո-
խութիւնն է որ ժողովուրդի մի-

ՎԱՐԳ-ՊԱՏՐԻԿՈՒԻ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆԸ (8)

Մի ամսից լիտոյ, մտայ մի մաս-
նաւոր դպրոց ուսուցիչից պատրաս-
տվելու: Երկու ամիս ֆիսիկոս յետոյ,
հանդիպեցի Դերուսուն, Տօնապետ-
եանին և Կուկուսեանին:

Առաջինը այդ միջոցին արձեռնա-
ւորաց դպրոցում էր, երկրորդը պատ-
րաստվում էր Պօլիս գնալ, իսկ Կու-
կուսեանը ներսեանս դպրոցի հին-
գերրոգ դասարանում էր և և բոլորու-
մի այդպիսիով, «Վարք Սրբոցից»
նրա մէջ ոչինչ չէր ֆիսիկոս և ոչ
նախկին մեղմութիւնից:

Երեք չորս ամսից յետոյ, մի օր
ընկերներեցս մէկը առաջարկեց գնալ
մի ժողովի, ուր մի քանի երիտա-
սարդներ գրքեր էին կարդում:

Աւրախութեամբ ընդունեցի այդ
առաջարկութիւնը:

Ընկերս և և երկուսիս փամբ
Յին ճարտար ընկանք դեպ ի ժողո-
վատիկին, գնում էինք նեղիկ ու
ազտոտ փողոցներով. վերջապէս հա-
սանք մի մտայ տուն, այդ փողո-
ցում մեծ մասամբ հրեաներ էին ապ-
րում:

Ժողովի սենեակը ցածի յարկում
էր, մի խոնար, առանց կարգուսար-
քի մոխրագոյն պատերով սենեակ էր
այդ բնակարանը, ուր մի քանի ետան-
դուն և խոնուս պատանիներ գաղտ-
նի ժողովներ էին կազմում արգելված
գրքերը կարդալու, կենսական բարդ
հարցերի մասին դատելու, վիճելու
և սովորելու համար: Այդ ժողովում
կային թէ Տօնապետեանը և թէ

Դերուսուն:

Ժողովի ղեկավարն էր Գիմիզի
նր Դրդ. գասարանի մի աշակերտ,
վառվաուն և բաւական զարգացած
մի պատանի: Այդ պարոնը հիմա լի-
նային ինժեներ է և նոյնչափ հա-
մակիր ամէն մի լաւ գործի:

Այդ առաջին գաղտնի ժողովն էր
որին մասնակցեցի: Եւ այդ այցելու-
թիւնը վերջինը եղաւ: Որովհետեւ
այնտեղ նիւթ եղած հարցերը մեծ մա-
սամբ անտեսական բարդ խնդիրներ
մասին էին. զգացի որ իմ մտաւոր
պայաջրը շատ քիչ էր այդ խնդիրների
մէջ մտնելու համար, սակայն մի
օգուտ ունեցայ, վճռեցի կանոնաւոր
կերպով կարդալ ուսուսաց գրականու-
թիւնը:

Այդ տեսակի ժողովներ շատ կային
Տփլիսում, ինչպէս վերջը իմացայ:
Մատաղ և զարգացած երիտասար-
դութիւնը, քաղաքը զանազան մա-
սերի բաժնած իր մնացած ընդունակ
կարգիւններին փոքր ինչ լուսատուրիլու
համար այդ միջոցին էր զիմել:

Այդ տեսակ մարդոց հետ ծանօթա-
լուց յետոյ, բնական է որ կսեցի
հետաքրքրվիլ գաղտնի հրատարակու-
թիւններով: Այդ միջոցներին Ռուսաս-
տանում հրատարակվում էր Նարոճնա-
եա Ողև (ժողովրդի կամք) ուսուցիչ
և Ազատութեան Առեւտրի հայրենի,
երկուսն էլ յեղափոխական թերթեր,
մէկը ուսուսական և միւսը հայկական
յեղափոխական երիտասարդների օր-
գանք: Որ երկն 84 թիւն կովկասում
կային յեղափոխական ձգտումներ ու-
նեցող հայ երիտասարդներ: Այսինքն
Արմենիայից և Հնչակից առաջ, նոյն

խոկ Լոնտոնի Հայաստանից:

Մի օր այդ երկու թերթից բուա-
կան բերի սուն. բոնցի սեղանիս
վրա և սկի եցի կարգով ուշադրու-
թիւնս բոլորովին լարած: Յանկարծ
գուռը բացվեց և ներս մտաւ մի ու-
տիկան Պրիստա: Թուրք սառեց,
մնացի չարած, և նրա հարցին—
Ուր եմ սովորում—հաղիւ կովկասով
պատասխանեցի:

Ինձ թված որ եկել էր ինձ ձեր-
բակալելու: Ուտիկանը պատրաս-
տվում էր իր երկրորդ հարցը տալ,
երբ պատշաճօրէն սենեակ մտաւ իմ
տանտիրուհին մի հսկա և ակնա-
ծելի տիկին:

Նա զիմեց Պրիստաին—ինչ էք
ուզում, պարոն:

—Սենեակ եմ ուզում վարձել,
տիկին, եղաւ պատասխանը:

—Է՛հ, համեցէք, վարձու սենեակն
այս կողմն է:

Պրիստաեւը հետեւեց տիկին Մար-
թին. ազատ չուռն քաշեցի, մի ա-
կընթարթում հաւաքեցի վտանգա-
ւոր թերթերը և նետեցի մահճակա-
լիս տակ:

Վերջը տան տիկինը եկաւ մօտս,
հարցրեց իմ գուտառովելու պատճառը,
որ նկատել էր լուսամտից: Նա նախ
ուրացայ, սակայն տիկինը շատ հար-
ցափորձին զիմանալ չը կարողացայ
և յայտնեցի ճշմարտութիւնը:

Տիկինը խնդրեց որ այդ տեսակ
լաւ բաները իրանց էլ տամ, իր աղ-
ջիկը կը կարգայ և կը բացատրէ:

Վերջերս այդ տիկինը մի կատար-
եալ մայր դարձաւ թէ ինձ և թէ
ուրիշների համար:

Ժամանակս շատ թանկ էր, դրա
համար էլ ուրիշ հարցերով զբաղվելու
միջոց չուռնէի. հարկաւոր էր լաւ
պատրաստվիլ ուսուսաց լեզուից, որ կա-
րողանայի քննութիւն տալ, պատի
խնդիր էր ինձ համար դպրոց մասն-
ըն, եթէ խօսքս և որոշումս չը կա-
տարէի, կարող էի նոյն իսկ անձնաս-
պանութեան զիմել:

Վերջապէս հասաւ Օգոստոսը, Տըփ-
լիսի բնակական դպրոցում, իմ ցան-
կացած դասարանում երկու երեք
տեղ կար միայն նոր աշակերտների
համար, իսկ այդ երեք տեղի համար
20ից աւել քննութիւն սուռններ
կային, որոնք բոլորն էլ ուսուցիչից
շատ լաւ էին պատրաստված: Այնու
ամենայնիւ ես թոյլ էի լեզուի մէջ.
ձեմարանը ինձ և ինչպէս ամէն-
քին այդ լեզուից շատ քիչ բան
էր սուռել: Ես չուզեցի ինձ լոկ բախ-
տին յանձնել և գնացի Բնքօւ, այն
տեղ ընդորովին տեղ չը կար, հարկա-
ւոր էր շտապել ուրիշ տեղ: Ժամա-
նակը սխառում էր. եթէ այդ տարի
դպրոց չը մտնէի վիճակս շատ վատ
էր լինելու, էլ երես չէի ունենալ ոչ
ընկերներին և ոչ ազգականներին
մօտ, իսկ հօրս զիմաց բոլորովին
յաղթված պէտք է լինէի: Ամենասու-
կային ինձ համար այդ պէտք է լի-
նէր: Այո պէտք էր գնալ ուրիշ քա-
ղաք և ամենամօտիկը Գաղտանի
նահանգական քաղաքն էր: Սակայն
դրամ չը կար: Երկար ու բարակ տա-
սանվելուց յետոյ, հետադրեցի հօրս
— Ուսուց. արան մտնելու համար ինձ
հարկաւոր է 50 բուրլի:

(Շարունակից)

Չից որոշում ու գուրս է նկատում ներխուժում ու վատ տարրեր, եւ յեզրափոխութեան նեղ բայց վեճ ճանապարհը մաքրում փչիւրից ու քարերից: Լացը եւ սուգը վատերի, պատաների եւ թոյլերի գործն է: Յեղափոխութեան մէջ լաց եւ արատաւք չը կայ: Եւսնակայ կայ կոխ, մահ, պարտութիւն եւ յաղթութիւն: Յողթի կարգ է միայն կուտղը, ազնիւ եւ վեճանձն կրուողը: Հազարաւոր զարերի փոքն է այց: Լաց, անկէք եւ հայճոյանք միայն զգուանք եւ արհամարանք են հրաւիրում . . .

ՎԱՐԴՈ

ՍԱԼՍԱՍ

(—)(—)

Սալմաստէն փետրուար 24 թուականով Մշակի գրուած յոյժ շահեկան թղթակցութենէ մը կը քաղենք հետեւեալ մասերը .

Այս տարի, Սոյի թուրք հիւպատոսը, զձեռն ասորի մը հետ որ ամերիկացի միսիոնարներուն ուսուցիչ-քարոզչին է, Սալմաստի սփարաւոր կը գրգեն հայերն հալածել: Սալմաստը նախ լուր կը զրկէ հայ իշխաններուն թէ Սալմաստի հայերը կտառաւորութեան աչքին մասնակից նկատուած են յեղափոխութեան ինչպէս նաեւ դաւաճան, որով խուզարկութիւններ ու ձերբակալութիւններ պիտի կատարուին, իսկ եթէ մեծ գումար մը տան իրեն, ազատ կը մնան ամէն նկողութենէ: Հայ մեծաւորները, ահաբեկ, ժողով կը գումարեն եւ կորոշեն այդ կաշառքը . . . չտալ, եղած զբաղարտութիւններուն ճանարտութեան գոյն մը չընծայելու համար: Երեւակայի սփարաւորին կատաղութիւնը: Ամբողջ երկու ամիս ստակալի կերպով կը կեղեքէ Սալմաստի հայութիւնը, հանգապաճը բանտ նետելով. հազարաւոր թուամաններ կը կորզէ ժողովուրդէն, մինչեւ որ վերջապէս Հաֆթլանցիները որ մը Գիլիման երթալով հեռագրատուն կը լցունին բարձրագոյն պաշտպանութեան ներքեւ մտնելու:

Այդ միջոցին թուրք հիւպատոսը կը հեռագրէ Սալմաստին թէ 26,000 հայ յեղափոխականներ մեծ պատաստութեամբ արգէն հասեր են Սալմաստ եւ ամէն վայրկեան արշաւանք մը կապառուի այս ինչ այն ինչ գիւղերէն: Սալմաստն ալ անմիջապէս հրճուանքով թեհարանի դեսպանին միջոցաւ պահանջներ կընէ Շահէն, որ, վրդովուած, իսկոյն կը հրամայէ Առաքատականի նահանգապետ Ամիր-Նիզամին անյապող ձերբակալել կարծեցեալ յեղափոխականները, իսկ տեղացի մասնակցողները խիստ կերպով պատժել: Աֆիոնամուլ Ամիր-Նիզամը անմիջապէս ստակալի հալածանք մը կսկսի Սալմաստի, Սոյի եւ Ուրմիոյ հայերուն դէմ եւ երբում կընէ բնաջինջ ընել զանոնք: Նախ կծու նաժակ մը կը գրէ հայր Սարաճեանին՝ զեկալար հոչակելով զայն յեղափոխականներուն եւ արգիլելով ու եւէ միջամտութիւն ընելէ այս պաշտօնական հալածանքին մէջ: Յետոյ օտար հիւպատոսներուն յայտարարութիւն կը գրկէ թէ մեծ թուով յեղափոխականներ կան յիշեալ երեք սեղերու մէջ, թէ կառավարութիւնը պիտի ջնջէ այդ վնասակար տարրերը եւ թէ եթէ այդ գործին մէջ օտար նպատակներն ալ փնտրուին, կառավարութիւնը պատախաճանք տուէ չէ, քանի որ անոնք ալ մասնակցած են յեղափոխութեան:

Երբ այս լուրերը Սալմաստ կը հասնին, ահ ու սարսափով կը լեց-

ուի խեղճ հայերուն սիրտը. վտանգը վերահաս էր: Ժողովներ կընեն, ճար մը կը մտածեն, բայց ոչ սք կը համարձակի նախաձեռնարկ ըլլալ գիմու մի մը: Վերջապէս Հաֆթլանցիները պատգամաւորութիւն մը կը զրկեն Գալիպոլի Ամիրին եւ հիւպատոսներուն միջամտելու: Բայց սասը վրայ Ամիրը ալ աւելի կը կատարի, եւ կորոշէ կոտորել հայերը: Բարձրագոյն քննիչներ եւ զօրքեր թնդանութիւնով կը հասնին ու կը գրաւեն Գիլիման քաղաքը: Կոտորածը պիտի սկըսէր. բայց վճռական ըրկէին յանկարծ ամէն բան կը փոխուի: Ամիր նիզամը, թուրք հիւպատոսը եւ սորին չէին մտաբերած որ անցեալ տարուան զէպքին եղած կարգազրուութեամբ, Պարսկաստանի ըստը քրիստոնեաները Ռուսիոյ պաշտպանութեան տակ կը գտնուէին:

Սալմաստի կառավարիչը իր քով կանչելով Հաֆթլանցի երեւելի հայերը, կը յայտնէ թէ Շահը հրամայած է քաղցրութեամբ վարուել իր սիրելի հայ հպատակներուն հետ եւ թէ Սալմաստը այլեւս չպիտի խառնուի այս տեսակ խնդիրներու:

Զօրքեր ու թնդանութիւններ ետ կը դառնան, եւ Սալմաստի յոյսը օղբ կը ցնդի:

Թ Ղ Թ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Պուրբէշ 27 Մարտ

Ռուսմանցի ընկերվարական երեսփոխան Տ. Վ. Մարցուն այսօր ծաղիւր սրահին մէջ զեղեցիկ կերպով խօսեցաւ Ռուսմանիոյ արդի դաշլիճին անօրէնութիւններուն դէմ, հրաւիրելով ժողովուրդը տապալել կառավարութեան զեկը վարողը — Պ. Սթուրգան:

Տ. Վ. Մարցուն երկարօրէն խօսեցաւ նաեւ հայերու մասին ըսելով, «Փոստաւոր պատմութիւն մը, զեղեցիկ մտտեղարկութիւն մը ունեցող աշխատասէր ազգ մը, հայերը, երբ բարբարոս թուրքի սուրին տակէն փախած կուզային նետուիլ քաղաքակրթեալ ժողովրդի մը մոյր, տիրահոչակն Սթուրգան (նախարարապետ) կը հրամայէ չընդունիլ այդ խեղճ ժողովուրդը, (ժախխարտը) ինքն, կեղծեմ հայերը) եւ զուք Ռուսմանցիներ, հանդուրժեցիք ըստբարոս թուրքին մեղաւորներն ըլլալ, մտոցաք թէ 1846ին զուք ալ միևնույն վիճակին մէջ էիք: Թէ Ռուսէթի, Գօլընիչիանու եւ ուրիշներ Արեւմուտքի մէջ պաշապանութիւն փնտրած են: Ինչ որ պիտի մտածէիք եւրոպայի վրայ եթէ մեր փախստականները ընդունուած չըլլային, միևնույնը կը մտածեն այսօր հայերը մեր մասին:

«Անդամ մը եւս Սթուրգան եւրոպայի առջեւ անպատուելով անպատուեց մեր երկիրը, ամերիկեան վայրենիներու կարգն անցընելով զմեզ . . . (Դախխարտը) ինք, վա՛ր Սթուրգան:

Պ. Ա. «Հայ Երեսփոխարկութիւն» ըստորագրութեամբ հետեւեալ հետագրով շնորհակալութիւն յայտնեց հայասէր երեսփոխանին, իր համակրական խօսքերուն համար:

Սախիա-Մուրի

Տ. Մարցուն, նուիրական պարտք կը համարինք ի սրտէ շնորհակալութիւն յայտնել Ձեզ այն համարակալ խօսքերուն համար զորս արտասանեցիք ինպատակ Հայոց, երեկուան գումարման մէջ:

Հայ Երեսփոխարկութիւն

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄՊԱՆԻԱ ԵՒ Մ. ՆԱՀԱՆԳ ԵՐԸ

Քաղաքական կացութիւնը, հին թէ նոր աշխարհի մէջ, զգալապէս երկիւղալի հանդամանք կըստանայ: Միացեալ Նահանգները ալ ձանձրացած կը թուեն իրենց երկարամեայ անվրդով ու միօրինակ կեանքէն: Պատերազմ մը, արեւան ժայթքում մը այլազանութիւն պիտի գնէր Եւրօքի տալարները դիզելու, հարստութեան զանգուածներ կանգնելու զբաղման մէջ: Խաղաղական շուրջերուն տակ զբահաւորի մը անակնկալ անհետացումը, Քուպայի ապստամբութեան արիւննուշտ խնդրին միանալով թափ տուաւ Ուաշինկթընի զաւկներուն մարտական շարժումներուն:

Սպանիական կոշկոռած բռնապետութիւնը, Օսմ. կայսրութեան պէս, յուսահատ մաքառումով կուղէ փարած մնալ Անթիլեաններու գոհարին, արեւմուտքով ազատութեան դուրս ժայթքած լավաները: Բարբախտաբար Քուպան, Հայաստանի պէս շատ չի գտնուիր Եւրոպայի մեծ տէրութիւններու շահերու շրջանակին մէջ, ու մեծ հաւանականութիւն կընծայէ յաղթանակով դուրս ելլալու իր հերոսական շարժումէն:

Հիմա, Սպանիոյ և Մ. Նահանգներու գիւնադիտակման յարաբերութիւնները գահալէժ վիճակ մը առած են:

Ժամերը ամիսներու ծանրութիւնը տնին, որովհետեւ ամէն ժամ կապառուի վճռական խոշոր մը և պատերազմի վողին արձակմանը Խաղաղական անհունութեանը վրայ:

«Մէյն» զբահաւորին պայթման պատճառները պարզող տեղեկագիրը ներկայացուցաւ Մաք Քինլի նախագահին: Ապացուցուած կը թուայ որ արտաքին պատճառով տեղի ունեցած է ընկերվարութեան բաժինը չորոշուի:

Սակայն, ամէն պարագայի մէջ, անխուսափելի կը նկատուի կռիւմը, որովհետեւ ամերիկեան հանրապետութիւնը պաշտօնապէս յայտարարած է որ Քուպա պէտք է այլ եւս անկախ հոչակուի, որուն համար ինք ամէն զոհողութիւն և ջանք պիտի ընէ:

Պատերազմի պատրաստութիւնները նոյն տեսչոտ փութաջանութեամբ կը շարունակուին երկու կողմանէ ալ:

ԵՒՐՊԵԱՆ, ՀՄԲՁԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեծամեծ յոյսեր գրուած էին անոր վրայ: Երբոր այս համաձայնութիւնը գոյացու քաղաքակրթեալ աշխարհի մէջ ամէն ոք կը կարծէր թէ անառիկ թուամը կազմուած է որուն ետեւ հան-

դիսա պիտի ապրէին տկարները, հարստահարածները, բոլոր անոնք որ բռնակալներէ անխրաւարար զոհուելու վիճակի մէջ էին: Ապագան ցաւոյ թէ ի՛նչ աստիճան յաջողեցաւ իր դերին մէջ: Հոյսաւ անի արևնոտ զաշտերը, կրէտէի աւերած գիւղերը պէտք եղած վկայութիւնները կուտան:

Այս համաձայնութիւնը քայքայուելու վրայ է և առիկա մեծ կորուստ մը չէ աշխարհի համար: Աւաղակներու ընկերակցութիւնները տեսական չեն կրնար ըլլալ: Խղումը կը սկսի նոյն իսկ ան կէտին վրայ ուր ամենէն զօրաւոր կերպով արտայայտուած էր, կրէտէի մէջ: Եւ նշանը տրուողն ալ նոյն Գերմանիան է որ քանի մը ամիս առաջ քրիստոնեա եկեղեցիներու մայրապետներուն վրայ ուժով արձակել տուած է: Ասոր կը հետեւի Աւստրիան որ իր կարգին կրէտէի մէջ ունեցած ուժերուն մեծ մասը ետ կը կոչէ: Իտալիա, իբր երրեակ նիդալակցութեան անդամ, փոխանակ իր գահակալներուն հետեւելու, անշարժ կը մնայ կրէտէի շուրջերուն մէջ: Ինչ որ կապացուցանէ թէ երրեակ նիդալակցութիւնն ալ Եւրոպեան ընդհանուր համաձայնութեանէն աւելի զօրաւոր հիմերու վրայ կեցած չէ:

Իրերու այս շփոթ կացութեան մէջ, երբ տէրութիւնները ոչ բռնածնին գիտեն ոչ թողածնին, երբ Ռուսիա իսկ, ամէնու պէս, թուրքիոյ զիջումներ ընելու հովեր կառնէ, հրաժարելով իր պահանջո մներէն—անվճար տուգանքէն, Եւրոպայի թեկնածութեանէն—թուրքերը ամէն տեսնէ տակի երես կեղեմ, իրենց ուժերուն վրայ կազմած արգէն ծիծաղելի վստահութիւններն ալ անկողի կը զարգանայ և մէկ կողմէն պնդելով իրենց ընտրելի Քարաթէօսօրի բաշախ ընդունելութեան վրայ, միւս կողմէ՛ այս ամօթալի դարավերջը կը շարունակեն ալ աւելի միջազնել իրենց բարբարոս արարքներով:

Գիւնադէտները կը շարունակեն իրենց աներես խայտառակութիւններն:

Իսկ Պ. Քրըզըն էր որ կը ծանուցանէր թէ Եւրոպայի թեկնածութիւնը յիտոս կոչուած չէր, այլ միայն առկալ մնացած. և թէ Գերմանիոյ և Աւստրիոյ մեկնումը ընդհանուրի հասանութեամբ եղած էր:

Կուլուխովքի կոմսը եւս կը փորձէ հեքթել Աւստրիական նաւերուն մեկնումին իսկական նշանակութիւնը:

Իսկ Պ. Հանթօ, Ֆրո. երեսփ. ժողովին մէջ, վստահակ Հայաստանի և կրէտէի մասին իրեն ուզուած կրակոտ հարցազրույցումներուն ուղղակի պատասխաններու, այնպիսի ճառեր կը կարգայ որոնցմէ ոչինչ կը հասկնան նոյն իսկ ամենէն ներհուն . . . ֆյանսագէտները:

(—)(—)

(—)(—)

ՊԵՅՄԻՔ ԻՖԼԱՍ

Թիւրք վագթընտա Ռուսչուգ- տա թէհսիս օլընան Գովաչօֆ պիրատէրէր նամ պանգասը քի օ զէմանտան պէրու կէրէք Պուկարիա իչէրիսինտէ վէ կէրէք էվրօքա բիացասընտա պէօյիւք էմնիյէթ քէսպ իթմիչ իտի, պու տէֆա իւչ պուչուգ (3 1/2) միւ- կօն ֆրանք աչըզլա Ռուսչուգ մահքէմէսի թարաֆընտան իֆ- լասիէթինէ գարար վէրիւմիչ վէ շէրիքէր թահթը թէվգըֆա ա- լընմըչլար տըր:

Իֆլասըն ասըլ սէպէպի Ռուս- չուգ Օսմանլը պանգասը օլուպ Գովաչօֆ պիրատէրէրին քէֆա- լէթ իթմիքլէրի 150,000 ֆը- ըանգըզ վէ Բինեաթէլի Անկէ- լօֆ իամի հալի պիր բօլիչառան տօլայը բրթթէսթ իթմիչ իտի:

Պու իֆլասըն թէֆէրընաթը շունլարտան իպարէթ տիր. պիր գաչ սէնէ էվվէլ Ռուսչուգ Օսմ. պանգասընըն իքի մէմուրլարը, Բինեաթէլի վէ Անկէլօֆ, ալաըզ- լարը մաաչլա իգթիֆա իթմէ- յուպ, իսթիֆա վէրիւք վէ կէ- ըէք Ռուսչուգտա, կէրէք Պը- ըայլատա պուլտայ թիճարէթ- կեահարը թէհսիս իտուպ, Օսմ. պանգասընտան քէնտիլէրինէ քրէտի աչըլըր: Գովաչօֆ պի- ըատէրէր տարի 80,000 ֆր. գաիրթալիա իլէ անլէրէ շէրիք օլուրլար:

Պու եէնի թիւճճարլարըն իչի ըասթ կիթմէտիկինտէն օսմ. պանգասը անլէր իչին ալաըլը քրէտի պիր պուչուգ միլիոնա չըզարմայա մէճպուր օլուր. հալ- պուքի պէօյլէճէ տալի էվվէլքի հալ տէվամ իթմէքտէ օլտուլընը կէօրիւպ Գովաչօֆ պիրատէրէր քէֆալէթի իլէ քէնտի մաթլու- պուլը թահթը էմնիյէթէ ալմագ իսթէր: Գովաչօֆ պիրատէրէր, Բինեաթէլի-Անկէլօֆ շիրքէթին մըգտարը քեաֆի պուլտայ վէ քէօմիւրի օլտուլընը վէ թուհա- նըն աչըլմասըլա պու մալլարըն գօլայլըզլա սաթըլուպ պանգասըն ալաճաղընը վէրիլէճէղինի հի- սապ իտէրէք, քէֆալէթ իթմէյէ ըաղի օլուրլար: Թուհառա վա- բօր իչլէմէյէ պաչլար իսէ տէ, Բինեաթէլի-Անկէլօֆտան սէս սէ- տա չըզմազ, զիրա հիչ մալլարը օլմայուպ Գովաչօֆ պիրատէրէրի ալտաթմագտա ըմըչլար: Օսմ. պանգասը արթըզ թէհսիսիւ ի- տէմէյուպ բրթթէսթ իտէր:

Պու կայէթ մուհիմ իֆլաս սէ- պէպիլէ տէյիլ եալընըլ Բուս- չուք թիւճճարլարը, զայլի էօք- սիւլլէր վէ տուլ գարըլար զա- ըարտիտէ օլմուչլար տըր:

Բուսչուք պանգալար սահիպլէ- ըինտէն պիր հէյէթ թէչքիլ օ- լունուպ, պու իֆլասըն սուհու- լէթիէ էօնիւնիւ ալընմասը իչիւն օսմ. պանգասընա միւրաճասթ իթմիչլէր տիր:

ԲՕԼԻԹԻԳԱ

Կ Ի Ր Ի Տ

Պապը Ալի Մարտ 22 թարիիլէ քէնտի էվրօքա սէֆիլիլէրինէ պի- ըէր նօթա եօլլայուպ, կիրիտէ պիր օսմանլը թէպաալը իրիս- թիյանըն վալի նասպ օլընմասը- նը իտտաա վէ Ալէք. անտը Գա- ըաթտօրի բաչանըն նամգէտլի- կինի թէքլիֆ իտէր: Էճնէպի պիր վալիինի նասպ օլմասըլա թիւրքիա գըլըլարընըն միւտա- ֆաասը պէօյիւք գօրլուզա տիւ- չար օլուճապ տըր, չիւնքի կի- ըիտին կիւզէլ լիմանլարը ար- թըգ Սուլթանըն տօնանմասընա իլթիճա օլմամայաճազլար տըր:

ԹԻՒՐԻՔ ՕՐՏՈՒՄԸ

Պիր գաչ հաֆթառան պէրու թէսալիտտան կէլէն Թիւրք առ- քէրլէրի հէր կիւն Սէլանիքտէն կէչուպ շըմէնաթէրլէ Մալէթո- նիա հուտուտընա տօղրու, վէ խուտուտըլա Գօսօվա վիլայէթինէ Իսկիւպ էթրաֆընա, Պուկա- ըիայա վէ Սէրպիայա գարչը թօփլանմագտա տըրլար: Շիմտի 20,000 գուտար սաքէր թէճէմ- միւ օլմուչ տըր:

Հալ պու քի Մալէթոնիա քօ- միթէլէրի, պա խուտու Պուկա- ըիտաա վէ ճարգի Բուսէլիտէ պուլլանլար, պու կիւնէ գա- տար հիչ պիր հարէքթիտէ պու- լունմամըչլար տըր:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Պէյլի Նիւտա՞րն Սթանպօլտան ալաըլը պիր հափաթիսինէ կէօ- ըէ, եաղընլարտա մահրիւմ օլ- մուչ օլան 8 հայլար իտամճէզա- սըլա էօլտիւրլիւմիւլէր տիր:

Տիկէր օթուղ իքի հայլար (տէօրտիւ քահանայ) Սթանպօլ- տա հապաա աթըլմըչլար տըր:

Իմքէրաթօր Վիլհէլմ Պէրլին ըուս էլիսիսիլէ զիյարէթ իտիպ պիր սահաթ գատար պէրապէր կէօրիւլմիւլէր տիր:

Բայլսթաի մէճլիսի տօնան- մա հազգընտաքի նիզամը գա- թիէն գապուլ իթմիչ տիր: Պու եէնի նիզամ գուլվէթի իլէ վէ իմքէրաթօրըն արզուսընա կէօրէ մէճլիս եէտի սէնէլիք պիր պիւտ- ճէյէ էվվէլտէն գարար վէրմիչ օլուրլար:

Լոնտրատան վէ Բէքինտէն շէքլէն թէլէկրաֆլարա կէօրէ, Չին սաքէրլէրի Բօրթ-Արթիւր- տէն վէ Թալիէն-Վանտան պիւս- պիւթիւն կէրի շէքլմիլլէր: Շիմտի պու իքի շէհիլլէրտէ ըուս պանտէրաա շէքլմիլլէր տիր:

Պուսթիմիսթըր կաղէթ՝ հէ- քիւլէրին՝ Մ. Կլաաթթօնըն հաս- թալըքտան էյիլէչմէսիսինէ տայիլ ռմէտլէրինի քէտմիչ օլաըլա- ըըն սէօյլէյօր:

Բուս կաղէթալարը իսթիգ- ըաղըն քեաֆիէսիսի քէնտի քէ- ֆալէթլէրի թահթընտա ալաըզ- լարը իչիւն, էվրօքա հիւքիւ- մէթլէրինէ թէչէքքիւր պէյան

Իտէյօրլար: Թէսալիտաա կիւն կիւնէ իւրըսըլըզլար վէ ճինայէթլէր արթմագտա օլտուղու իչիւն օ- վալարտա իգամէթ իսէն էհալի տաղլարա գաչմագա պաչլամըչ տըր:

Բրէնսօմէրտինանտ հաղլէթ- լէրի բազար կիւնիւ Վիէննատան չըգարագ, Սօֆիայա ալտէթ իթ- միչ տիր: Վալիտէսի Բրէնսէս Գլէմանթին թէհլիքէտէն գուր- թուլմուչ տըր:

Կիրիտ իրիսթիյանլարը բը- ըէնս Եսրիտըն ինթիլապը ի- չիւն արզուհալլար եաղըպ կիրիտ ռմուճի մէճլիսինէ թագտիմ ի- տէճէքլէր իմիչ:

Նօլօտի կաղէթասընըն եաղտըլընա նազարէն, Մալէթո- նիա հազգընտա Թիւրքիա վէ Պուկարիա պէյիւնտէ իլէրի կէ- լէն մէսէլէնին հալլը, Պալգան- լարտա պուլունան թէքմիլ ուֆազ տէվլէթլէրին պիրլէչմէսիսինէ միւ- թէվագըֆ տըր:

Կէչէն հաֆթա իգմիլտէ ինֆիլտէնցա հասթալըզընտան եաթանլարըն մըգտարը 20,000է եէթիլմիչ տիր:

Պապը Ալի իւչիւնէիւ տէֆա օլարագ, Սկիւպ առաչտորքըն Տ. Սինէսիլէնին իսթիֆասընը թա- լէպ իթմիչ տիր. պու բահիպ սօն գարըլըզլարա շէրիք օլմուչ ըմըչ, այնը սէպէպլէ Սկիւպտէ պուլունան 60 ըահիպ վէ մուալ- լիմլէրին թարտընը Սթանպօլ էկզարքընտան թալէպ օլընմըչ տըր: Եկզարք պու թարա իչիւն օլան տէլիլէր (նչան) քեաֆի կէօրէմէյիպ, ըտտ իթմիչ վէ Սօֆիա սինօթըն տիգզաթընը պու թարալարտան իլէրի կէլէ- պիլիլ թէհլիքէլէր իւզէրինէ տալլէթ իթմիչ տիր:

Աթիւնտան եաղըլաըլընա կէօրէ, Թրայքօ իսմինտէ պիրի- սի օրայա կիտիպ Մալէթոնիա գօմիթէսի թարաֆընտան կէօ- նիւլիլէր եաղմագտա ըմըչ:

ԽԱՏԻԷԼԵՐ

Վառնատա պուլունան Թիւր- քիա իսթիլէլէրի, քէնտի ալ- տըզլարը մաաչլարա պէտէլ պիր մարիֆէթ կէօթէրմէք իչիւն, կէօյա Վառնատա վուգու պուլ- մուչ օլան պիր թագըմ սալ ու է- սասը օլմայան խապէրլէր Սթան- պօլ զապթիլիսինէ կէօնտէրի- յօրլար ըմըչ:

Պու ալչազ ճանազարլարըն իթմիլլէրի գահպէլիկին էօլ- չիւսիւ կէչտիկինտէն, պու քէր- ըէ վիճառանըլ վէ ալչազ թէտ- պիրլէրլէ պիր թագըմ պիկիւնահ վէ պիչարէ հայ գաղթականլա- ըըն պաչլարընը եէմէքտէն քէն- տիլէրինի սագընտըլըլը. չիւն- քի Աւտարանըն թէմիլիլինէ նազարէն Չիք ինչ ծածուկ որ ոչ յայտ- նեսցի:

ՇԱՐԺՈՒՄ ՊԱՏԱՄԱՆՆԵՐԸ
Արա-Գեղեցիկ, Ռուսչուք — Կեղծ անուն կրող յորուածներ չեն հրա- տարակուր, մինչև որ յօղուածա- գրին բուն անունը չհաղորդուի իւրմ- բազրութեան: Զարմանալի բան որ այսչափ տարրական բան մը գիտ չէք ըմբոնած:
Վասակ-Սիւնի, Շուվա. — Գահա- նային ի նպատ գրութիւն մը, ինչ- պէս արդէն բաժ էինք, չի կրնար հրատարակուիլ մինչև որ բազմաթիւ ծանօթ անձերու ստորագրութիւններ չկրէ:

ՊՕՐՍԱ

Table with exchange rates for various currencies and goods. Includes items like 'ՊՈՒՂՏԱՅ', 'Վազօն', 'Արապա', 'ԱՐԲԱ', 'Լիպրա', 'ՄԸՍՐՐ', 'ՖԱՍՈՒԼԵԱ', '100 օգգասը 19-25 ֆրանք', 'Առապա մուամէլէսի նարօլէն 21 ֆրանք', 'Իւնտէ 2-3 վազօն վէ 15-20 ա- ըապա պուլտայ, 10-15 արապա ար- ըա, 4-5 վազօն վէ 7-8 արապա մըսըր կէլմէքտէ տիր:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Հայ Կաղրակահմարտի շնորհակալութիւն
Հնդկաստանի հայ պաղութի մասին պատմական եւ ազգագրական խիստ շահեկան աղեկութիւններ պարու- նակող սոյն անգլիերէն երկասիրու- թիւնը, գոր հեղինակը, Տիար Մես- ըրով Սէթեանց՝ Կալիպթային զրկած է մեզ, կարճէ որ ամէն անգլիագէտ ազգայիններու թանգարանին մէջ գտնուի:
ԳԻՆ Ն ՇԻԼԻՆ
Կեղրոնտեղի Վառնա Ապուրահ- ման մզկիթի դէմը, Ա. Զարպանէլեան Հայկական Գրատան մէջ:

ՏՊԱՐԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ
Կը տպագրուին ամէն լեզուէ ալցեստոմս, հասցէտոմս, նամա- կազուխ, հարսանեկան հրաւի- ըագիր, մահազգ, ինչպէս նաև պրօչիւններ:
Գրեներն յոյժ գիւրամատչիլ:
Ուրիչ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգու- թեամբ և փութով կը կատար- ուին:

Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ
Վառնաի մէջ կը վաճառուի Մու- սալա, թանիկ կէօլիպէօյի քեանի խանութը, Մասուն սրճարանի ծխա- վաճառին քով եւ Ապուրահման մզկիթին դէմը հայկական գրատու- նը, Ա. Զարպանէլեանի քով:
Отговорникъ: X. Тахмисянъ
Печатница „Взаимность“ Варна.